

ՐԱՎԵԼՎԱԾ

ՄԱԿ-Ի ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՅԵՑԱԿԵՏԸ¹

Ժամանակակից գիտության տեսակետից ներկայումս քաղաքակրթությունը կանգնած է ճամփարաժամկետության վերահաս գլոբալ աղետ՝ որպես շրջակա միջավայրի վրա մարդու ազդեցության հետևանք, կամ վերակողմնորոշում դեպի զարգացման նոր ուղիներ:

ՄԱԿ-Ի շրջանակներում բոլոր պետությունների կողմից ընդունված արդի քաղաքակրթության զարգացման պաշտոնական դոկտրինը կայուն (ներդաշնակ, հավասարակշռված) զարգացման տեսությունն է: Այն ներկայիս և հաջորդ սերունդներին երաշխավորում է իրենց ունակությունները դրսևորելու և կենսական կարիքները բավարարելու պատշաճ և հնարավորինս հավասար մեկնարկային պայմաններ: Կայուն զարգացումը հակիրճ կարելի է բնութագրել որպես զարգացման տնտեսական, էկոլոգիական և սոցիալական գերակայությունների միջև փոխհամաձայնություն կամ փոխզիջում ապահովելու ձգտում:

Ըստ Ն. Ռեյմերսի² մարդկությունը իր գոյության ընթացքում բազմիցս վերապրել է գլոբալ էկոլոգիական ճգնաժամներ, որոնք հաջողվել է հաղթահարել համապատասխան «հեղափոխությունների»՝ գյուղատնտեսական երկու հեղափոխությունների, արդյունաբերական և էներգետիկ հեղափոխությունների և, վերջապես, գիտատեխնիկական հեղափոխության շնորհիվ: XX դարի վերջը հեղինակը բնութագրում է որպես «էկոլոգիական պլանավորման հեղափոխության» անհրաժեշտության ժամանակահատված, ինչը կարելի է անվանել որպես «անցում դեպի կայուն զարգացում»: Եվ եթե անցյալի հարմարողական (աղապտացիոն) «հեղափոխությունները» ուղեկցվել են բնության կողմից կարգավորվող մարդկային պոպուլյացիայի որոշակի կորուստներով (բնական աղետներ, սով, համաճարակներ, պատերազմներ), ապա կայուն զարգացման արդի տեսությունը կոչված է տվյալ հարմարեցումը իրականացնել հնարավորինս անկորուստ, օգտագործելով բնության ինքնակարգավորման մեխանիզմները:

Ներկայումս աշխարհի ավելի քան 100 երկրներում ձևավորվել են կայուն զարգացման ազգային խորհուրդներ (ԿԶԱԽ)՝ որպես որոշումների ընդունման գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցությունն ապահովող միջոց: ԿԶԱԽ-ները, միավորելով հասարակության տարրեր խմբեր, կարող են ազգային գաղափարախոսության մեջ ձևավորել համընդհանուր բարության հասնելու բարոյական հիմնադրույթներ, որոնք հոչակված են երկրի Յրովարտակում:

Երկրի Յրովարտակի Միջազգային Կոմիտեի համանախագահ Կամլա Չառւդրին գրում է.

«Երկրի Յրովարտակը (ԵՅ) մի փաստաթուղթ է, ինչպես նաև մի շարժում, ընդունված աշխարհի տարրեր ծայրերում և զանազան արժեքային համակարգերում, որը փորձում է խափանել դեպի աշխարհի կործանում տանող միտումները»:

ԵՅ-ն մի փաստաթուղթ է, մի ուղերձ մարդկությանը, որը կոչ է անում առաջնորդվել կայուն զարգացման սկզբունքներով, բարոյական և էթիկական արժեքներով՝ կարեկցանքով լի և խաղաղ

¹ Դանիելյան Կ. Ս., Կայուն զարգացման համաշխարհային գործընթացը և Յայաստանը. կուտակված փորձը, մարտահրավերներն ու ձեռքբերումները, Երևան, 2006:

² Ռեյմեր Ռ. Հաճեջօն և այլ աշխարհագործության համար անհանդապահ անձնություններ. Կոնցեպտալ անալոգիա. Մոսկվա, 1992.

աշխարհում:

Մենք գտնվում ենք պատմության խաչմերուկում և մեր հույսն է, որ ԵՀ-ն մի նոր նպատակ, նոր ուղղություն կընծայի մեր ապագային:

Գիտության և տեխնոլոգիաների հետ մեկտեղ մենք վերապրում ենք հակամարտություններ և պատերազմներ, որոնք արտացոլում են մեր հոգիմերում տիրող քառորդ պառա և աններդաշնակությունը: Միայն 1998 թվականին աշխարհը տեսավ 26 միջազետական հակամարտություններ և 23 միլիոն փախստականներ: Մի՞ թե սա առաջընթաց է:

Ուզում եմ հիշել Գանդիին, այդ սուրբ մարդուն և քաղաքական գործչին, ազնվագույն առաջնորդին: Յամալսարանի ուսանողների հետ գրուցելիս, նա մի հարց բարձրացրեց. «Արդյո՞ք տնտեսական առաջընթացն իրական առաջընթաց է», և ավելացրեց. «Որքան հասկանում եմ, տնտեսական առաջընթաց ասելով մենք նկատի ունենք անվերջ նյութական աճ, իսկ իրական առաջընթացը հոգևոր և բարոյական առաջընթացն է»: Իր նույն ելույթի ժամանակ նա ասաց. «Յամաձայն եմ, որ առանց տեխնոլոգիական և տնտեսական առաջընթացի մենք չենք կարող ապահովել բարոյական առաջընթաց, քանզի աղքատությունը կարող է հասցնել միմիայն բարոյական հետընթացի: Անշուշտ, բոլորը պետք է իրավունք ունենան արժանավայել կյանքի, ունենան տանիք գլխավերնում, հագուստ, սնունդ իրենց և իրենց ընտանիքների համար: Բայց վերոհիշյալ կարիքները բավարարելու համար մեզ հարկավոր չեն ոչ տնտեսագետներ և ոչ էլ տեխնոլոգներ»: Գանդին նկատի ուներ, որ իրական առաջընթացը պետք է պարտադիր կերպով գուգակցվի հոգևոր և երիկական արժեքների հետ: Նա ասաց. «Ես համարում եմ, որ բոլոր ժամանակների լավագույն տնտեսագետը Յիսուս Քրիստոսն էր: Ես համարձակվում եմ ենթադրել, թե աշխարհի սուրբ գործերը շատ ավելի խորը և ամփոփ տրակտատներ են օրենքի և տնտեսագիտության վերաբերյալ, քան ժամանակակից տնտեսագիտական դասագրքերից շատերը»:

Մեզանից շատերն են համաձայն, որ կայուն զարգացմամբ հասմելու համար մենք պետք է նվազեցնենք մեր պահանջները և սպառողական մողելները և փոխենք մեր ապրելակերպը: Այս փոփոխությունները կատարելու համար պահանջվում է բարոյական ուժ, որն այնքան էլ հեշտ չէ գտնել մեր մեջ, և այդ պատճառով նման վարք ունեցող մարդիկ հազվադեպ են հանդիպում: Գիտության զարգացումը, նորանոր տեխնոլոգիաները և նոր համակարգչային ծրագրերը չեն տանում դեպի այդ փոփոխությունները: Մեզ հարկավոր է հոգևոր հիմք, որը մեզ ուժ կտա այդ փոփոխություններին հասնելու համար:

ԵՀ-ի առաքելությունն է աջակցել Երկիր մոլորակի պերճության և ամրողականության պահպանմանը, օգնել վերաբերվել նրան նույն սրբությանը, ինչպես մեր նախնիները, և վերանայել մեր զարգացման ու առաջընթացի ուղիները»:



Բովանդակություն